pümfvorին ընծայվող գոտու և գլխարկի հետ։ Քավորը հանձնում էր fբէքը հարսին շորեր հագցնող կնոջը՝ մի քանի կոպեկ նրան նվեր տալով։ Հարսնացուին հագցնում էին տան օթախում։ Գոտին, ինչպես վերը նշեցինք, կապում էր fավորը կամ սկեսրայրը։ Գոտին կապողը երեք անգամ տանում էր գոտին հարսի գլխով աջից ձախ, վերցնում ոտների մոտից և այս հմայական մոգական արարողությունը կատարելուց հետո նորահարսի մեջքը կապում և մեջքին կամացուկ խփելով ասում՝

«Աստված մի ղոչ տղա տա»[42]։

Քավորկինը նորահարսի գլխին շարդաթի վրայից կապում էր pümբ[43], որ մի նախշուն բազմերանգ ժապավեն էր՝ վրայից կախված ծոփէրավ։

Հնում և տղայի գլխին էին կապում pümբ և ոչ միայն կրծքին օսկապը, և այդ պատճառով էլ պսակվողները կոչվում էին pümվor, pümfումի։

Նորահարսին դուրս էին բերում արդեն զգեստավորված և կանգնեցնում տան մեջ։ Թümվorի կողքին մի մարդ էր կանգնում, որի կինը չբեր կամ մեռած չէր, որպեսզի այդ շարիքներից զերծ պահված լինի պսակվողը։ Սկսվում էր պսակի կարգը։ Քահանան շտապում էր եկեղեցի կարգի մնացած մասն այնտեղ ամբողջացնելու համար։ Թümքվորն ու Թümքուհին շոքում և համբուրում էին տան օջախը և ապա բոլորն էլ դիմում էին եկեղեցի։ Այն դեպքերում, երբ որևէ պատճառով չէին գնում եկեղեցի, կամ գյուղում եկեղեցի չլինելու պատճառով կամ երբ շհասությունը արգելք էր հանդիսանում, պսակը կատարվում էր շրթին վառած մոմերով օջախի կամ թorէնի մոտ։

Եկեղեցի գնալիս՝ pümվorի աջ կողմից գնում էր fավորը մի մեծ մոմ ձեռքին, ձախ կողմից՝ փէսախպէրը, նույնպես մոմ բռնած, հարսը գնում էր փեսի ետևից։ Աղջկա մի թևից հարսնախպէրն էր պահում, մյուս թևից՝ հարսնէֆուirը, որոնք կամ իրոք հարսի եղբայրն ու քույրն էին լինում կամ նրանց փոխարինող մոտիկ ազգականները։ Ապագայումն էլ նրանք պետք է ամենաջերմ կապեր պահպանեին այդ նորահարսի հետ, մանավանդ ախպէրը։ Մրկրոնէրը շրջապատում էին նրանց մոմերը ձեռներին, երգելով, պարելով, գինի խմելով, ատրճանակ և հրացան կրակելով, անշուշտ ոչ այնքան իրենց ուրախությունը ցույց տալու, որքան դրանով ներս խուժելու ձգտող քաջքերին հեռու քշելու և նախանձ ու չարկամություն ունեցողների չար աչքից և հմայություններից պահպանելու համար։ Առջևից գնում էր զուռնա-զավալը բարձրաձայն նվագելով։ Ամեն չարիքի առջև առնելու նպատակով հարսնախպէրը կամ հարսնէֆուirը բռնում էին նորափեսայի փեշից և փեշի ծայրը պահում էին նորահարսի կրծքի առջև, որ պսակվողների միջով ոչ ոք չանցնի չարամտությամբ և չկտրի նրանց մեջ հաստատվող կապը, նրանք չկոխվեն և չկորցնեն սերունդ ունենալու ընդունակությունը։ Գնացքին մասնակցում էին բոլոր գյուղացիք։ Տղայի և աղջկա ծնողները բացակայում էին։

Եկեղեցի հասնելով fավորը մի քանի կոպեկ էր տալիս ժամկոչին, որ դուռը բաց ասի։ Մրկրոնէրից մի քանիսը մնում էին դուրսը՝ չլինի՞ թե մեկը չար դիտավորությամբ քար նետի եկեղեցու վրա. մյուսները մտնում էին ներս։ Պսակադրության միջոցին նորահարսն ու նորափեսան գինի էին խմում միևնույն ամանից—այսպիսով ամրացվում էր երկուսի միջև հաստատվող միասնությունը։ Նույն նպատակով նրանք պիտի կանգնեին գլուխը գլխին տված և

---

42 Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 77, 78։

43 Արծվանիկ, Գորիս։